

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՍԻՐՈ  
ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ



Գ Ի Տ Ա Ն Ք  
Երևան 2006

Կարինե Աղաբեկյանը ճանաչված արձակագիր է: Նրա գրչին են նաև պատկանում «Սիրո վերադարձը», «Կնոջ մենամարտը», «Սիրո կանչը», «Զգացմունքների ներդաշնակություն», «Սեր և արժանապատվություն», «Կզան բազում արշալույսներ» և «Սիրո ուսուցիչը» վիպակները, որոնք նշանավորեցին հայ առաջին սիրավեպի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Սիրո հասունացումը/ Կ. Աղաբեկյան: Եր.: Գիտանք, 2006. - 136 էջ

Երիտասարդ դաշնակահարուհի Լիլիթ Զարյանը որոշում է հրապարակայնորեն պարսավել իր խոստումը դրժած՝ «Վերածնունդ» հրատարակչության տնօրեն Սիեր Ռշտունուն: Սակայն երիտասարդների առաջին հանդիպումն անսպասելի հետևանք է ունենում. նրանք սիրահարվում են միմյանց: Այս գիրքը հերոսների դժվարին սիրո պատմությունն է: Արդյո՞ք կին-երաժիշտը կկարողանա իր համերգները համատեղել կնոջ ավանդական պարտականությունների հետ: Արդյո՞ք հայ տղամարդը կցանկանա հաշտվել կնոջ հյուրախաղերի և այն մտքի հետ, որ իր սիրելիի կյանքում երաժշտությունն այդքան կարևոր տեղ է գրավում: Կբաժանվե՞ն նրանք, թե՞ միմյանց կզիջեն՝ իրենց սերը պահպանելու համար...

**ISBN 99930-806-0-3**

Կազմի ձևավորումը՝ Ա. Աղաբեկյանի

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները մտացածին են, ուստի իրական անձանց ու դեպքերի հետ բոլոր զուգադիպությունները զուտ պատահականություն են:

## ԳԼՈՒԽ 1

Աշնան մեղմ երեկո էր: Պայծառ լույսերով ողողված մեծ սրահում տիրում էր տոնական աշխուժություն: «Գործարարության հանրագիտարանի» շնորհանդեսին էին հրավիրված մամուլի բազմաթիվ ներկայացուցիչներ, հեռուստալրագրողներ, գործարարներ: Թարթում էին լուսաբանկիչները, բզզում էին տեսախցիկները, իսկ սրահի աջ անկյունում քաղցրավենիքով ու ընպելիքով սեղան էր սպասքավորված:

Լիլիթն ալեկոծված զննում էր օրվա հերոսին: Աղջկա սև աչքերը բոցկլտում էին խիտ ու երկար թարթիչների տակից: Սլացիկ կազմվածքը գրկած մետաքսե գինեգույն զգեստը ավելի էր ընդգծում զայրույթից շառագունած այտերը, իսկ ուսերին փռված շագանակագույն ճոխ վարսերը թրթռում էին նրա բորբոքված շնչառությունից:

*Այսօր կամ երբեք: Դե՛, Լիլիթ, դու կարող ես, դու պե՛տք է դա անես:* Նա վճռական շարժումով հետ գցեց մազերը:

Այո՛, այսօր կարևոր օր էր «Վերածնունդ» հրատարակչության տնօրեն Միեր Ռշտունու համար: Նույնիսկ այս՝ նստած դիրքով նրա հուժկու կազմվածքը վճռականություն ու եռանդ էր ճառագում: Ըմբոստ սև մի մազափունջ ընկած էր բարձր ճակատին, խիտ հոնքերի տակից առկայծում էին զարմանալիորեն բաց-մոխրագույն աչքերը:

- Այսպիսով, - Միերը ձայնը բարձրացրեց, - ինչպես և նախորդ գրքի շնորհանդեսի ժամանակ են հայտարարել, այս անգամ ևս գրքի վաճառքի եկամտի մի մասը կհատկացնենք որևէ երիտասարդ տաղանդավոր երաժշտի աջակցելու համար: Ես

դա իմ պարտքն են համարում և, առիթից օգտվելով, դիմում են այստեղ գտնվող բոլոր գործարարներին: Մեր արվեստագետներին անհրաժեշտ են հովանավորներ, առանց աջակցության մեր արվեստը...

- Մի՛րոպե, - Լիլիթը վեր թռավ տեղից, - ի՛նչ բոցաշունչ ճառ... Իհարկե, թղթակիցների ու տեսախցիկների ներկայությունը միշտ էլ ոգևորել է մե՛ծ բարերար պարոն Ռշտունուն, բայց...

- Ներողություն, - Սիերը ապշահար շրջվեց դեպի նա, - ես...

- Ձեր ներողությունն ուշացել է: - Լիլիթը վճռականությամբ առաջ շարժվեց ու դարձավ լրագրողներին, - թո՛ւյլ տվեք պարզաբանել: Ես երաժիշտ եմ...

- Սա թյուրիմացություն է: - Սիերը փորձեց փրկել իրավիճակը: - Ես ձեզ չեմ ճանաչում, եթե ինչ-որ հարցեր ունեք ինձ հետ լուծելու, ապա շնորհանդեսից հետո սիրով կլսեմ ձեզ, իսկ այժմ պետք է խոսքս ավարտեմ և պատասխանեմ...

- Ո՛չ, ես պետք է ասեմ. հենց հիմա, - Լիլիթի ձայնը հուզմունքից ընդհատվեց, աչքերը լցվեցին արտասուքով:

Սրահում աղմուկ բարձրացավ: Երկու տղամարդ ուղղվեցին դեպի Լիլիթը, սակայն տեղերից բացականչություններ չսվեցին.

- Թո՛ղ խոսի... Լսում ենք.. Խոսե՛ք:

- Լավ, - կարճատև մտորումից հետո համաձայնեց Սիերը:

- Շնորհակալություն, - Լիլիթը խոր շունչ առավ: - Իմ անունն է Լիլիթ Ջարյան, ես դաշնակահարուհի եմ: Այս տարվա սկզբին իմ տեսաերիզն ուղարկելուց հետո Փարիզից դաշնակահարների մրցույթին մասնակցելու հրավեր ստացա: Պարոն Ռշտունու հայտարարությունից ոգևորված՝ որոշեցի նրան դիմել աջակցություն ստանալու ակնկալիքով: Տասն օր անընդհատ, բոլոր փաստաթղթերը ձեռքիս, փորձում էի արժանանալ

նրա ընդունելությանը: Ավա՛ղ, ապարոյուն... Ամեն օր քարտուղարուհին հայտնում էր. «Պարոն Ռշտունին զբաղված է, պարոն Ռշտունին ձեզ չի կարող ընդունել», իսկ վերջին օրը կտրականապես հայտարարեց, թե պարոն Ռշտունին դիմումս մերժել է և, առհասարակ, դատարկ բաներով զբաղվելու ժամանակ չունի:

Միերն այլայլվեց.

- Սա հաստատ թյուրիմացություն է: Ես երբեք այդպես չէի վարվի:

- Ես ստախոս չեմ, - բորբոքվեց Լիլիթը: - Եթե չեք հավատում, հարցրեք ձեր քարտուղարուհուն:

- Անպայման, - հավաստիացրեց Միերը: - Ես խոստանում եմ անհապաղ զբաղվել այդ խնդրով: Պարզաբանվելուն պես բոլորիդ տեղյակ կպահեմ:

*Մի՞թե սխալվել եմ, իրեն հարցնում էր Լիլիթը: Այս մարդը նման չէ ստահակի: Ի՞նչ արտասովոր աչքեր են: Այդ թուխ մաշկի հետ..*

- Լիլիթ, - աղջիկը ցնցվեց Միերի ձեռքի հպումից, - կարելի՞ է ձեզ այդպես դիմեմ:

Լիլիթը գլխով արեց:

- Խնդրո՛ւմ եմ, սպասեք մինչև երեկոյի ավարտը: Մենք անպայման պետք է խոսենք:

- Լավ, - համաձայնեց Լիլիթը:

Միերը, բաժակը ձեռքին, լսում էր գործարարներից մեկի դիտողությունները, իսկ աչքերի առջև Լիլիթի կանացի պատկերն էր. ի՞նչ կրակոտ աչքեր, գերող շուրթեր: Հապա վարսերը, կարծես մետաքսե հեղեղ լինի... Նա մի պահ խոսակցության թելը կորցրեց, բայց, սթափվելով, խնդրեց հարցը կրկնել: Լինելով բարձրաստիճան պաշտոնյայի միակ զավակը՝ Միերը լավ կրթություն էր ստացել: Արտասահմանում կատարելա-

գործվելիս մեծ փորձառություն էր ձեռք բերել: Մասնագիտական բազմաթիվ շփումները ընդլայնել էին նրա մտահորիզոնը, նպաստել ձեռնարկած գործի հաջողությանը, որը միշտ առաջնային էր նրա կյանքում: Այդպիսի հաջողության հասնելու համար հարկավոր էր տքնաջան, լարված աշխատանք, և Սիերը միշտ էլ գերադասում էր հաղթահարել խոչընդոտող բոլոր դժվարությունները: Հարկավ, նա անտարբեր չէր գեղեցիկ սեռի նկատմամբ, սակայն նրա համար կինը լոկ անցողիկ ու հարմար մի հաճույք էր, ոչ ավելին: Մասնավանդ որ նրանք, առանց Սիերի կողմից որևէ ջանք գործադրելու, իրենք էին ընկնում նրա գիրկը: Դեռ ոչ մի կնոջ չէր հաջողվել գրավել այդ տղամարդու սիրտը: Գրոհներ անշուշտ շատ էին եղել, քանզի գրեթե անհնար էր դիմակայել երեսուներկուամյա Սիերի առնական հմայքին: Վերջին ամիսների սիրուհին՝ Անին, ապարդյուն փորձեր էր ձեռնարկում՝ ճեղքելու նրա երկաթյա պաշտպանությունը: Սակայն Սիերն անսասան էր:

Լիլիթը լրագրողների հարձակումը հետ մղելուց հետո մի խաղաղ անկյուն էր գտել: Նա մտազբաղ հայացքով հետևում էր Սիերին: Դա առաջին անգամ էր, որ տղամարդն իր վրա այդպիսի տպավորություն էր գործել: Հիշելով, թե ինքն ինչպես արձագանքեց նրա ձեռքի հպումին, աղջիկը շառագունեց: Դա անձանոթ ու քաղցր զգացում էր:

Քսաներեքամյա Լիլիթի կյանքը հարուստ չէր իրադարձություններով: Նա լոկ մի դավանանք ուներ՝ երաժշտությունը: Կատարելությանը հասնելուն էին նվիրված նրա հոգին ու ամբողջ ժամանակը: Դեռ մանկուց, երբ իր հասակակիցները բակում անհոգ խաղում էին, Լիլիթը դաշմանուրի մոտ վարժություններ էր նվագում: Երբ սիրահարված ընկերուհիները սրտատրոփ վազում էին գաղտնի ժամադրության, նա Բախի երաժշտության աշխարհն էր հայտնագործում: Այժմ ընկերուհի չուներ: Նա

քսան տարեկան էր, երբ մտերիմ ընկերուհին նենգաբար զավթեց այն պատանուն, որը Լիլիթին սեր էր խոստովանել: Առաջին սիրո բողբոջները դեռ նոր էին փթթել, և այդ կրկնակի դավաճանությունը աղջկա հոգում խոր վերք թողեց: Այլևս ո՛չ մի ընկեր: Կարևորը երաժշտությունն է: Երաժշտությունն է, որ սփոփում է հոգին: Երաժշտությունը հնարավորություն է տալիս սավառնելու հուզական երևակայության ոգեշունչ աշխարհում...

Մտքերով տարված՝ աղջիկը չնկատեց, թե ինչպես ավարտվեց շնորհանդեսը:

- Լիլիթ, - Միերի թավշյա ձայնը սթափեցրեց նրան, - եթե դեմ չեք, բարձրանանք իմ աշխատասենյակը:

Նա աղջկան մեղմորեն թևանցուկ արեց և ուղեկցեց դեպի վերելակը:

- Հիմա ամեն բան կպարզենք, - Միերը սեղմեց վեցերորդ հարկի կոճակը:

Վերելակը սրընթաց վերև շարժվեց: Լիլիթին համակեց մի արտասովոր զգացում, տղամարդու մոտիկությունից ու օժանելիքի նուրբ-դառնավուն բույրից նրա սիրտը, ասես խենթացած, սկսեց զարկել: Այս ի՞նչ է կատարվում իր հետ: Լիլիթը ջանաց կարգավորել իր շնչառությունը:

- Դուք հիշո՞ւմ եք, թե ստույգ ո՞ր օրն էիք եկել ընդունելության:

Նա պատրաստվում էր պատասխանել, երբ խցիկը հանկարծակի ցնցվեց, ապա կանգ առավ: Նրանք հայտնվեցին մթության մեջ: Լիլիթը կորցրեց հավասարակշռությունը, և կարծես ինչ-որ մի ուժ նրան առաջ հրեց՝ ուղիղ դեպի Միերը: Միերի ձեռքերն ինքնաբերաբար բացվեցին, և նա իր գիրկն առավ ընկնող աղջկան: Ձիգ մարմնին ամուր սեղմված՝ Լիլիթն զգում էր նրա սրտի համաչափ բաբախյունը:

- Ինչպե՞ս եք, ամեն ինչ կարգի՞ն է, - տղամարդու ձայնը տարօրինակ խռպոտ էր: - Մի՛ հուզվեք, պարզապես նորից հոսանքն անջատեցին: Հուսանք՝ երկար չի տևի:

- Ես լավ եմ, - Լիլիթը ջանաց չմատնել իր հուզմունքը:

Նա զգուշաբար ազատվեց Սիերի գրկից: Այժմ Սիերը միայն թեթևակի բռնել էր նրա արմունկները, սակայն Լիլիթը տակավին շարունակում էր զգալ իրենց գրկախառնությունը, և դա տագնապում էր իրեն:

Լույսը բռնկվեց, և խցիկն անմիջապես շարժվեց դեպի վեր: Մնացած ճանապարհն անցան առանց արկածների: Սիերը բաց արեց աշխատասենյակի դուռը և ներս հրավիրեց նրան: Դա մի ընդարձակ ու ճաշակով կահավորված սենյակ էր: Մեծ աշխատասեղանն ու բազմաթիվ գրքերով ծանրաբեռն դարակները գրավում էին մտնողի ուշադրությունը:

- Նստե՛ք, խնդրեմ, - Սիերը ցույց տվեց հարմարավետ բազկաթոռը:

Նա աշխատասեղանից վերցրեց գրքույկ-օրացույցը և նստեց Լիլիթի դիմաց:

- Եկեք ճշտենք այն օրը, երբ դուք առաջին անգամ եկել էիք ընդունելության:

- Դա հունվարի 27-ն էր, - միանգամից պատասխանեց Լիլիթը. այդ օրը նա միշտ էլ ցավով էր հիշում, քանզի դա իր մայրիկի մահվան օրն էր:

Սիերն արագ թերթում էր գրքույկը, մինչև որ գտավ հարկավոր էջը:

- Ահա՛, - մատնանշեց փնտրվող տողերը, - գրքի տոնավաճառ Մոսկվայում հունվարի 25-ից փետրվարի 8-ը: Ես ձեզ ե՞րբ վերջնականապես «մերժեցի»:

Լիլիթը գունատվեց.

- Փետրվարի 6-ին:



Միերը մեղմ ժպիտով նայեց նրան.

- Ուստի, ես ամեն դեպքում չէի կարող ձեզ ընդունել, քանի որ բացակայում էի քաղաքից:

- Բայց ձեր քարտուղարուհին այդ մասին ոչինչ չասաց... Վա՛յ, հապա *դատարկ բաներով զբաղվելու ժամանակ չունենա՞լը:*

Միերի շուրթերը ջղաձգորեն սեղմվեցին.

- Ես դրանով անմիջապես կզբաղվեմ: Իսկ դուք մասնակցեցի՞ք մրցույթին:

Լիլիթը գլուխը խոնարհեց.

- Ավա՛ղ, ուրիշներին դիմելու համար արդեն ուշ էր. ժամկետը շատ սեղմ էր:

- Ցավում եմ, - տղամարդու դեմքն անկեղծ ափսոսանք էր արտահայտում:

Մի որոշ ժամանակ նրանք լուռ էին: Միերը մտովի որոշում ընդունեց, որ ինքը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է աջակցել երիտասարդ դաշնակահարուհուն. չէ՞ որ հրապարակայնորեն խոսք էր տվել: Իսկ նա միշտ էլ իր խոսքի տերն էր:

- Լիլիթ, ուրիշ ի՞նչ մրցույթի կցանկանայիք մասնակցել: Ես կհովանավորեմ ձեզ:

Աղջկա աչքերը հրճվանքից փայլեցին.

- Իրո՞ք... Ես շատ զգացված եմ: Եկող գարնանը Լեյպցիգում կայանալու է Բախի անվան մրցույթը: Ես միշտ փափագել եմ մասնակցել այդ մրցույթին: - Լիլիթն ավելի ոգևորվեց: - Գիտե՞ք, Բախը իմ ամենասիրած երգահանն է:

Կարծես ներքին մի լույս էր բռնկվել աղջկա դեմքին. նա ամբողջովին շողում էր ոգևորությունից:

- Բարի: Այսուհետև, օրիորդ, ես ձեր տրամադրության տակ եմ, - կատակով հայտնեց Միերը:

- Պարոն Ռշտունի...

- Միե՛ր:

Լիլիթը մի պահ վարանեց.

- Ը-ը... Միեր, խոստանում եմ, ես չեմ չարաշահի ձեր ժամանակը: - Ապա վեր կացավ ու ձեռքը մեկնեց Միերին: - Շատ շնորհակալ եմ:

Միերն ամուր սեղմեց նրա ձեռքը:

- Լիլիթ, ինձ տվեք ձեր հեռախոսի համարը: Վաղն անպայման ձեզ զանգ կտամ: Տեսնենք, քարտուղարուհիս ինչպես կբացատրի իր արարքը...

...Ազատվելով բաճկոնից ու իրեն խեղդող փողկապից՝ Միերն արձակեց վերնաշապկի վերևի կոճակն ու թևքերը քշտեց: Յետևելով նրա օրինակին՝ Լիլիթը ևս հանեց բաճկոնակը և մնաց ծիրանագույն մետաքսե եթերային բլուզով: Միերը վառեց մոմերն ու լույսը հանգցնելով՝ նրան հրավիրեց մտերմիկ ընթրիքի սեղանի մոտ: Նրանք հարմարապես ընկողմանեցին ցածր ու փափուկ բազկաթոռներին:

- Մեզ հարկավոր է ազատվել լարվածությունից, - հայտարարեց Միերը՝ բացելով շամպայնի շիշը:

Փրփրուն գինու երկրորդ բաժակից հետո ջահելները հանկարծակի հասկացան, որ քաղցած են, և համերաշխ գրոհեցին ուտելիքին: Միերը, ուրախ կատակելով, անընդհատ լցնում էր Լիլիթի գավաթը: Առաջին շիշը լրիվ դատարկելուց հետո անցան երկրորդին: Լիլիթն ինչ-որ հարցով դիմեց նրան, բայց Միերը, հայացքը նրան հառած, չկարողացավ որևէ բառ արտաբերել: Աղջկա հրապույրը գերել էր նրան, շունչը բռնվել էր. լուռ նայում էր ու հիանում նրա վառվռուն այտերով, թանձր թարթիչներով երիզված՝ կայծկլտուն աչքերով: Տենչում էր համբուրել, փաղաքշել... և այդ ցանկությունն այնքան ուժեղ էր, որ գրեթե ցավ էր պատճառում:

Լիլիթը ելավ բազկաթռռից և իրանը գայթակղիչ կերպով ճկելով՝ ձգվեց, որ վերցնի իր պայուսակը: Այդ շարժումն այնքան զգայահարույց էր, որ Միերը նույնպես ականա վեր կացավ: Նա ի վիճակի չէր հրաժարվել Լիլիթին նայելու զգայական հաճույքից: Նուրբ մետաքսի միջով հստակ նշմարվում էին կրծկալի ժանյակներն ու գայթակղիչ ուռուցիկությունը՝ այնտեղ, որտեղ վերջանում էին ժանյակներն ու սկսվում էր քնքուշ, փափուկ կուրծքը: Չնկատելով տղամարդու անհագ հայացքը՝ Լիլիթը նորից նստեց, իսկ Միերը սոսկ մի բան էր փափագում՝ դիպչել նրան... Նա թիկունքից մոտեցավ Լիլիթին ու գրկեց փխրուն ուսերը: Նրան շոշափելը գերագույն հաճույք էր: Անհամբեր դողը բռնեց տղամարդուն: Այժմ, երբ իր զգայուն մատները դիպան աղջկա պարանոցին, Միերը գիտակցեց, թե որքան է կարոտել նրան: Նա առաջ թեքվեց և այրվող դեմքով սուզվեց երանաբույր վարսերի մեջ:

- Այս ի՞նչ անուշ ու բուրավետ ես դու, - մրմնջաց՝ համբուրելով նազելի պարանոցը, այնտեղ, որտեղ խենթորեն թրթռում էր զարկերակը:

Լիլիթը փակեց աչքերը և փորձում էր ընդդիմանալ իր մեջ բարձրացող ցանկության ալիքին, որը սոսկ մի հպումով հարուցեց Միերը: Սիրելիի փաղաքշանքը, երջանկության զգացումը, որով հոգին առլեցուն էր, և դրանց գումարած՝ նենգ շամպայնի ներգործությունը, նրան հասցրել էին արբեցուցիչ, գերագույն զմայլանքի վիճակի, այնպիսի մի վիճակի, երբ ինքնավերահսկումը գրեթե հնարավոր չէ: Լիլիթն ասես երազում լիներ: Դա այն երազներից էր, որ վերջերս անընդհատ այցելում էին նրան, և որից հետո արթնանում էր՝ սրտատրոփ, հուզված, չբավարարված... ափսոսելով, որ դա լոկ երազ էր: